ՆՎԱՃԵՔ ՄՏՔԻ ԱՄՐՈՑՆԵՐԸ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ՀԵՍՈՒ 6.1-16, 20

Հեսու 5.13-15 – Երբ Հեսուն Երիքովում էր, իր աչքերը բարձրացնելով՝ տեսավ, որ ահա իր դիմաց մի մարդ էր կանգնել՝ ձեռքին էլ մի մերկ սուր: Հեսուն մոտեցավ նրան և ասաց. Դու մեզանի՞ց ես, թե՞ մեր թշնամիներից: 14 Նա ասաց. Ո՛չ, ես Տիրոջ զորավարն եմ և հիմա եկա: Հեսուն երեսնիվայր գետին ընկավ, երկրպագեց և ասաց նրան. Ի՞նչ է հրամայում իմ տերն իր ծառային: 15 Եվ Տիրոջ զորավարն ասաց Հեսուին. Հանի՛ր կոշիկներդ քո ոտքերից, որովհետև քո կանգնած տեղը սուրբ է: Եվ Հեսուն այդպես արեց:

> *«Տիրոջ հաղթանակը չի կարող լինել հանրության մեջ, քանի դեռ մենք չենք մեկուսացել Տիրոջ հետ Իրեն երկրպագելու համար: Հեսուն երկրպագության մեջ ընկավ երեսի վրա, նա խոնարհությամբ հանեց իր կոշիկները և հանձնեց իր բոլոր ծրագրերն իր Զորագլխին, երբ նա ասաց. «Ի՞նչ է հրամայում իմ Տերն իր ծառային»: - ՈՒՈՐԵՆ ՎԻԵՐՍԲԻ*

Խոստում.
*1 Երիքովն ամուր փակված էր Իսրայելի որդիների պատճառով: Դուրս եկող և ներս մտնող չկար:
2 Տերը Հեսուին (Եհովան փրկություն է) ասաց. Տե՛ս, ես քո ձեռքն եմ հանձնել Երիքովը, նրա թագավորին և զորավոր քաջերին: 3 Դուք՝ բոլոր պատերազմող մարդիկդ, շրջապատե՛ք քաղաքը՝ մեկ անգամ պտույտ տալով քաղաքի շուրջը: Վեց օր այդպես կանեք: 4 Յոթ քահանա յոթ հոբելյանական փողեր թող վերցնեն տապանակի առջևից, իսկ յոթերորդ օրը յոթ անգամ պտույտ կտաք քաղաքի շուրջը, և քահանաները կհնչեցնեն փողերը: 5 Երբ նրանք հնչեցնեն հոբելյանական եղջերափողերը, և երբ դուք լսեք փողերի ձայնը, ամբողջ ժողովուրդը մեծ աղաղակ կբարձրացնի. քաղաքի պարիսպները փուլ կգան, և ժողովուրդը վեր կգնա՝ ամեն մեկն ուղիղ իր դիմացը:*

I. ՀԱՎԱՏՈՎ ԵՐԻՔՈՎԻ ՊԱՐԻՍՊՆԵՐԸ ՎԱՅՐ ԸՆԿԱՆ:

Ա Հովհաննես 5.4 – որովհետև ամեն ոք, ով Աստծուց է ծնված, հաղթում է աշխարհին: Սա՛ է այն հաղթությունը, որ աշխարհին հաղթեց, այսինքն՝ ***մեր հավատը****:*

- ***Այժմ, եկեք քննենք Հեսուի հավատքն ըստ Եբրայեցիս 11-ի:***

  Եբրայեցիս 11.1-2 ***Հավատը*** *հուսացված բաների հաստատումն ու աներևույթ բաների ապացույցն է, որովհետև նախնիները դրանով վկայություն ընդունեցին:*

  - *ես քո ձեռքն եմ հանձնել Երիքովը*

  Եբրայեցիս 11:6 – Բայց ***առանց հավատի*** *անկարելի է Աստծուն հաճո լինել, որովհետև Աստծուն մոտեցողը պետք է հավատա, որ նա կա և իրեն փնտրողներին վարձահատույց է լինում:*

- *Հավատքը պարզապես ինչ-որ բանի հավատալը չէ, դա գործողություն է:*

  Հակոբոս 2:19-20 – Դու հավատում ես, որ Աստված մեկ է, լավ ես անում. դևերն էլ են հավատում և սարսափում են: Բայց ուզո՞ւմ ես իմանալ, ո՛վ փուչ մարդ, որ հավատն առանց գործերի անիմաստ է:

Եբրայեցիս 11.30-31 – 30 Հավատով Երիքովի պարիսպները վայր ընկան, երբ յոթ օր նրա շուրջը պտտվեցին: 31 Հավատով Ռախաբ պոռնիկը չկորավ անհավատների հետ, որ խաղաղությամբ էր լրտեսներին ընդունել:

II. ԳՈՎԱՍԱՆՔԸ և ԱՂՈԹՔԸ ՀԱՎԱՏՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ Է:

Տեսիլքը

6 Նավեի որդի Հեսուն կանչեց քահանաներին և ասաց նրանց. Վերցրեք ուխտի տապանակը, և յոթ քահանաներ յոթ հոբելյանական փողեր թող առնեն Տիրոջ տապանակի առջևից: 7 Եվ ասաց ժողովրդին. Անցեք, շրջապատեք քաղաքը, և զինյալ մարդիկ Տիրոջ տապանակի առաջն անցնեն: 8 Երբ Հեսուն ժողովրդին ասաց, յոթ քահանաները, որոնք ունեին յոթ հոբելյանական փողերը, Տիրոջ առաջն անցնելով, հնչեցրին փողերը, ու Տիրոջ ուխտի տապանակը գնում էր նրանց ետևից: 9 Զինյալ մարդիկ գնում էին փողեր հնչեցնող քահանաների առջևից, իսկ վերջապահները՝ տապանակի ետևից. քահանաները գնում և հնչեցնում էին փողերը:

Սաղմոս 22.3 Բայց դու սուրբ ես, ո՛վ բնակվողդ Իսրայելի գովասանությունների մեջ:

- *Ուխտի տապանակը հիշատակվում է յոթ անգամ 6-12-րդ համարների միջև: Ինչո՞ւ է դա կարևոր:*
- *Բոլոր հանգամանքներում Սուրբ Հոգին նախ վերականգնում է Աստծո ներկայությունը մեր կյանքում:*

10 Հեսուն ժողովրդին պատվիրեց՝ ասելով. Մի՛ աղաղակեք, և ձեր ձայնը չլսվի, ու ոչ մի խոսք դուրս չգա ձեր բերանից մինչև այն օրը, երբ ես ձեզ ասեմ՝ աղաղակե՛ք. այն ժամանակ կաղաղակեք: 11 Տիրոջ տապանակը դարձավ քաղաքի շուրջբոլորը՝ մեկ անգամ պտույտ տալով, ապա բանակատեղի եկան և գիշերը մնացին բանակատեղիում: 12 Հեսուն վաղ առավոտյան վեր կացավ, և քահանաները վերցրին Տիրոջ տապանակը: 13 Յոթ հոբելյանական փողերը կրող յոթ քահանաները գնում էին Տիրոջ տապանակի առջևից՝ հնչեցնելով փողերը: Զինյալ մարդիկ գնում էին նրանց առջևից, իսկ վերջապահներն էլ՝ Տիրոջ տապանակի ետևից, և քահանաները հնչեցնում էին փողերը: 14 Երկրորդ օրն էլ մեկ անգամ պտույտ տվեցին քաղաքի շուրջը և վերադարձան բանակատեղի: Այդպես արեցին վեց օր:

- *Ել. 20:11 - 11 Որովհետև Տերը վեց օրում ստեղծեց երկինքն ու երկիրը, ծովն ու դրա մեջ բոլոր եղածները, իսկ յոթերորդ օրը հանգստացավ:*

15 Յոթերորդ օրը կանուխ վեր կացան լուսաբացին և նույն ձևով յոթ անգամ պտույտ տվեցին քաղաքի շուրջը. այդ օրն էր միայն, որ յոթ անգամ պտույտ տվեցին քաղաքի շուրջը: 16 Յոթերորդ անգամ, երբ քահանաները հնչեցրին փողերը, Հեսուն ասաց ժողովրդին. Աղաղակե՛ք, որովհետև Տերն այս քաղաքը ձեզ է տվել: Եվ ժողովուրդն աղաղակեց փողերը հնչելիս:

20 Երբ ժողովուրդը լսեց փողերի ձայնն ու բարձրաձայն աղաղակեց, պարիսպները փուլ եկան: Ժողովուրդը բարձրացավ դեպի քաղաք՝ ամեն մեկն ընթանալով ուղիղ իր դիմացը: Եվ գրավեցին քաղաքը:

Ինչո՞ւ իսրայելացիները շրջեցին Երիքովը: Նրանք կարող էին շրջանցել և առաջ շարժվել:

III. ԻՆՉ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՍՈՎՈՐԵԼ ԵՐԻՔՈՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ:

Բ Կոր. 10.3-5 – 3 Թեև մարմնով ենք ապրում, բայց մարմնաւորապէս չենք զինուորութիւն անում: 4 Որովհետեւ մեր զինուորութեան զենքերը մարմնավոր չեն, այլ զորավոր են Աստծով՝ բերդեր քանդելու. մենք դրանցով քանդում ենք ծածուկ մտքերը 5 և ամեն բարձունք, որ Աստծու գիտության դեմ է գոռոզանում, ու գերում ենք ամեն միտք՝ Քրիստոսին հնազանդեցնելու համար:

- *Պետք է հասկանանք, թե ինչի հետ գործ ունենք: Սա մի ազգի կռիվ չէ մյուսի դեմ: Սա ՀՈԳԵՎՈՐ ՊԱՏԵՐԱԶՄ Է:*

  «Մենք աղոթում ենք այս ամրոցի դեմ…»: Դուք երբևէ լսել եք, որ ինչ-որ մեկը այս տողն արտասանի աղոթքով, թե՞ ինքներդ եք դա արտասանել: Եթե երբևէ օգտագործել եք այս արտահայտությունը, ի՞նչ նկատի ունեիք այն օգտագործելիս:

  Բերդերը հետևյալնն են՝

  1. *Աստծո գիտության դեմ բարձրացված մտքեր/փաստարկներ:*
  2. *Աստծո գիտության դեմ ուղղված ամբարտավան կարծիքներ:*
  3. *Մտքեր (կամ գաղափարներ), որոնք որևէ մեկին կհեռացնեն Քրիստոսին հնազանդվելուց:*

  Միտքը դա ուղեղը չէ: Միտքը առանձին մաս է (սուբյեկտ), որը կառավարում է ուղեղնե: – Դոկտոր Լիֆ

  Մեր յուրաքանչյուր միտքը փոխում է մեր ուղեղի կառուցվածքը: Եթե մենք անընդհատ բացասական մտքեր ունենք, մենք այդ մտքերը կուտակում ենք մեր ուղեղում, ինչն էլ ազդում է մեր ապագա մտածողության, խոսքերի և վարքի վրա:

Եփ. 6.10-13 – 10 Այսուհետև զորացեք Տիրոջով ու նրա զորության ուժով: 11 Եվ Աստծու սպառազինությամբ զգեստավորվեք, որպեսզի կարողանաք սատանայի հնարներին դիմադրել: 12 Որովհետև մեր պատերազմն արյան և մարմնի դեմ չէ, այլ իշխանությունների և պետությունների դեմ, այս խավար աշխարհի տիրակալների դեմ, երկնքում գտնվող չար ոգիների դեմ: 13 Դրա համար Աստծու սպառազինությունը վերցրեք, որ չար օրը կարողանաք դիմադրել ու ամեն բան հաղթահարելով՝ հաստատուն կանգնել:

Մեր Հոգևոր Զենքերն են.

Արդարության զրահը

Կոշիկ Ավետարանը քարոզելու

Հավատի վահանը

Փրկության սաղավարտը

Հոգու սուրը

Հարատև աղոթքը.

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ